*Ծանոթ.* Խաչքարն արվեստի նշանակալից գործ է: Շրջանակներին բուսական հյուսկեն զարդեր են, ուղղանկյուն խորանում 2 խաչեր, կոթունին՝ իրար հագած 2 եռանկյունիներով շրջագումը:

Հրատարակչի (Գ. Կարախանյան) դիտողությամբ՝ «Անմեկնելի է արձանագրության ութերորդ տողի ... ՈՎՍԱՑՈՅ հնչյունախումբը», նա նկատել է նաև, որ հաջորդ տողի հստակ երևացող ԲՄՈՒՆ կարող է ԿԱՐՄՈՒՆՋ լինել, որի «նախորդ և հաջորդ գրերը հստակ չեն երևում»: Վերջին տողի սկիզբը կիսաեղծ է, իսկ երկու երրորդը իսպառ ոչնչացված՝ խաչքարը ցած նետելու հետևանքով: Այդ հատվածը լրացվել է *ով սաւցոյ* (= սոցա, սորա՝ կամրջի) *տէր լինի եւ զաւէրն (?) կարմունջս՝ դատի յայ , կաէնի* տարբերակով՝ անառարկելի չհամարելով այն: Խաչքարը տեղահանվել ու ցած է տապալվել 1930-ական թվականներին, որի պատճառով ջարդվել են քիվը, արձանագրության որոշ հատվածները: Այն պատվանդանին է վերատեղադրվել 1990 թ. Աշիկ Վարդանյանի խմբի կողմից:

*Արձանագրություն, որն արդ չկա.*

***880. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** արևելյան պատին, դրսից.

Թուին ՈԿԵ(1216), ես Վասակ յիշեցի զահեղ աւր
Տեառն և ետու զիմ հոգւոյ պարէնն եկեղեցիս. առաջնորդ
Տիրացու վարդապետ եղբայրքս ետուն պատարագ ի տաւնի
Սրբոյ Գրիգորի որ խափանէ դատի յԱստուծոյ:

*Հրատ.* Ջալալյանց. Ա, 109. ՎՏ, 60. «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 44:

*Ծանոթ.* Հրատարակել է միայն Ջալալյանցը, տեղում այժմ չկա: Եթե թվականը ճիշտ է արտագրված, ապա այն չէր կարող Ս. Գրիգորի (Աստվածածնի) պատի վրա լինել, ինչպես նշում է հրատարակիչը, որովհետև այն կառուցվել է :ՈՀ: (1221) թվին, այլ՝ միմիայն միանավ եկեղեցու պատին: Սարգսյանը տեղադրում է ժամատան հյուսիսարևելյան ճակատին: Տիրացու վարդապետի առկայությունը ևս կասկածելի է դարձնում թվի ճշտությունը:

## ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

***881. ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատին, երկու քարի վրա, պատի տարբեր հատվածներում, 5 տող.



ԿԱՄԱՒՔՆ ԱՅ ԵՍ՝ ԴԱՒԻԹ ԽԱՐԱՋ, ՄԻԱԲԱ⌈ՆԵՑԱ ԵՒ ԻՄ ՀՈԳՈ⌉
ՊԱՇԱՐՆ ԵՏՈՒ ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ՇԻՆՈՒԹԻ⌊ՒՆ⌋Ս Ե⌈Ւ ՄԻԱԲ⌉-
ԱՆՔՍ ԸՆԿԱԼԱՔ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՍՄԱ ԶԴ⌈ԱՒԹ⌉-
Ա ՏԱՒՆ⌊Ի⌋Ն ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵ⌈Ց⌉ԻՔՍ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԻՄ ⌈ՄԵՂԱՑՍ ՏՐ⌉
Է ԱՌԱՋԻ ԱՅ, ՅԺԸ (318) ՀԱ⌈Յ⌉ՐԱՊԵՏԱՑ ՆԶՈՎՍ ԱՌ⌈ՑԷ⌉:

***Ծանոթ***. Արձանագրության աջ եզրը եղել է երրորդ քարի վրա, որը փոխվել է նորոգումների ընթացքում, վերականգնումները երկմտելի չեն: Սակավ հանդիպող եզրույթ է Դավթի արհեստը մատնանշող *խարազ* պարսկերեն բառը, որը նշանակում է *ստնամամ կարող, կոշկակար:* Դավիթն իր *հոգո պաշարն* (= խնայած, տնտեսած միջոցները) տվել է ոչ թե եկեղեցու շինարարության, այլ *բարեկարգության, շենության (= շինութիւնս)* համար:

***882. ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատի արևելյան մասում, ջարդոտված, 6 տող.



ՈՂՈՐՄՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ⌊Ն⌋ ԱՅ ԵՍ՝ ԽՈՑԱՅ⌈ԴԵՂՍ ԵՒ ՀԱ⌉-
ՅՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ, ՄԻԱԲԱՆ⌈ԵՑԱՔ ՍԲ ՔԱՌԱՍՆԻՑՍ ԵՒ Ե⌉
ՏՈՒ ՂՈՋՆ ՀՈՂՆ: ԳԷ⌊Ո⌋Ր⌊Գ⌋ Վ⌊ԱՐ⌋Դ⌊ԱՊԵՏ⌋ ԵՒ ՄԻ⌈ԱԲԱՆՔՆ ԵՏՈՒՆ Ս⌉-
ՏԵՓԱՆՆՈՍԻ ՏԱՒՆՆ ԶԱՄԷՆ ԵԿԵ⌈ՂԵՑԻՔՍ . . . ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ⌉
ԽՈՑԱԴԵՂԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ Մ⌈ԵՂԱՑՍ ՏՐ Է ԵՒ⌉
:ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ Ն⌈ԶՈՎՍ ԱՌՑԷ⌉:

***Ծանոթ***. Եկեղեցու պատի այս մասը վերաշարված է, ըստ երևույթին, երկրաշարժի ավերումից հետո: Արձանագրված երեսակալները տեղաշարժված են, դրված աջ ու ձախ, ուղիղ ու գլխիվայր, զգալի հատվածներ լրացված են նոր քարերով, խաչաբեկորներով: Նվիրագրի ավարտի քարերը չկան, իսկ վերջին տողը այլ քարի վրա է, միանգամայն անեղծ: ***Ղոջն*** տեղանունը թերևս հասկացվի ***ղոջի՝ ծերունու հողն*** կամ ***ղոչի (= խոյի):*** Առաջին տողի անձնանվան գրերը ջարդված են և լրացվում են ըստ 5-րդ տողի ***(Խոցադեղ)***:

*Վիմագրից առկա է երկու լուսանկար, որոնցից մեկում առաջին տողի վերջնամասը սվաղի տակ է (մյուսում այդ մասը պարզ կարդացվում է ԽԱՉԱՅ, այսինքն ԽԱՉԱՅ⌈ՏՈՒՐ⌉, ինչպես գրչագրում): Կարծում ենք, Խոցադեղ կարդալուն նպաստել է հինգերորդ տողասկզբում այդ անվան առկայությունը: Երրորդ տողի առաջին տառը պարզորոշ Ր-է, ուստի ԵՏՈՒ ՂՈՋՆ վերծանությունը գտնում ենք թեական (խմբ.):*

*883. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատի արևելյան մասում, ստորին շարքում, գլխիվայր, քների բոլոր կողմերից.



[ԿԱՄԱՒՆ ԱՅ Ե]Ս՝ ՊԱՊԱՔՍ Մ[ԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ]
[ՈՒԽՏԻՍ ԵՒ ԵՏՈՒ] ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱՇ[ԱՐՆ: ...]
...[ՄԻԱԲԱ]ՆՔՍ ԽՈՍՏԱՑ[ԱՆ ....]
...[Պ]ԱՏԱՐԱԳՆ ԻՆՁ: ԿԱ[ՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ի ՏԷ]:

*884. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատի արևելյան մասում, կից նախորդին, թերի, 4 տող.



ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ ՄԻ[ԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՔԱՌԱ-]
ՍՆԻՑՍ ԵՒ ԵՏՈՒ [ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆ: ՀԱ]
ՅՐԱՊԵՏՍ ԵՒ ՄԻԱ[ԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ]
ԶՊԷ[ՏՐՈՍԻ ՏԱՒՆ]ԻՆ Պ[ԱՏԱՐԱԳ]...:

***Ծանոթ.*** Ստորև հնարավոր է լրացնել ինչ-որ բան, բայց իմաստը չի ամբողջանում: *Հայրապետը* վանահայրն է, որը հիշված է 1276 թ. մի արձանագրության մեջ:

*Վերջին երկու վկայագրերի լուսանկարների ուշադիր դիտումը և վերծանությունների իմաստային համադրումը ցույց են տալիս, որ դրանք մեկ արձանագրության երկու հատվածներ են (տառաձևերը նույնն են): Սկզբնապես տեքստը փորագրված է եղել երեք քարերի վրա, որոնցից պահպանվել են առաջին երկուսը: Ստորև ներկայացնում ենք համադրված և լրացված բնագիրը (խմբ.).*

*ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ [Ե]Ս ՊԱՊԱՔՍ Մ[ԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՔԱՌԱ]*
*ՍՆԻՑՍ ԵՒ ԵՏՈՒ ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱՇ[ԱՐՆ Ի ՍԲ ՈՒԽՏԱ, ՀԱ]*
*ՅՐԱՊԵՏՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑ[ԱՆ Ի ՏԱՐԻՆ]*
*ԶՊԷ[ՏՐՈՍԻ Տ]ԱՒՆԻՆ ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ: ԿԱ[ՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ի ՏԷ]:*

*885. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատի արևմտյան մասում, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՎԱՀԼԱՏԻՆՍ, Զ .... [ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՔԱ]-
ՌԱՍՈՒՆՔՍ ԵՒ ՏՎԻ ԶԻՄ Ծ ......................
ԳՆՏԻՆ ՏՈՒՆՆ ԺԱՄՍ ......................
Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ[Ի]Ն ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑ[ԻՆ] ................
Ղ ԱՒՐՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, Ի ՏԱՒՆ[ԻՆ] ..................:

***Ծանոթ.*** Շարունակությունը կրող երկրորդ քարը ոչնչացված է, տեղում դրված է նորը: Առաջին տողի *Վահլատին* անձնանունը կարդացվում է պարզեպարզ, սակայն այն անսովոր է թվում:

**886. ԵԿԵՂԵՑԻ.** հարավային պատի արևելյան մասի մի քարի վրա. 6 տող.



ՈՂՈՐՄՈՒԹ⌈ԵԱՄԲՆ ԱՅ ........ ԵՒ Ա-⌉
ՄՈՒՍԻՆ ԻՄ ...⌈ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒ-⌉
ԽՏԻՍ ԵՒ ՇԻՆ⌈ԵՑԱՔ⌉............
Է ՄԵՐ ԱՐԴԵ⌈ԱՆՑ⌉...............
ԱՌԱՋՆՈՐԴ..................

***Ծանոթ.*** Ըստ երևույթին, շինարարական վկայագիր է, սակայն շարունակությունը կազմող երկրորդ քարը չկա և ոչ մի կերպ հնարավոր չէ ամբողջացնել:

**887. ԵԿԵՂԵՑԻ.** արևմտյան մուտքի ճակատակալ քարին, 8 տող.



Ի ԹՎԻՍ ՉԵ (1256):
ՈՂՈՐՄՈՒԹ⌊ԵԱՄ⌋ԲՆ ԱՅ ԵՍ՝ ՏՐ ՀԱՄԱ-
ԶԱՍՊ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՆ ՀԱՂԲԱՏԱ,
ԱԻՐՀՆԵՑԻ ԶԷԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՏՎԻ ԶԴՍԵՂ ԺՈՂՈՎՈՒ-
ՐԴ՝ ԿԱՄԱԿՑՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ ՀԱՂԲԱՏԱ ՄԻԱԲԱՆՑՆ, ԱՌԱՋՆՈՐԴ-
ՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ ԳԷ⌊Ո⌋Ր⌊Գ⌋ Վ⌊ԱՐ⌋ԴԱ⌊ՊԵՏԱՅ⌋:ԱՐԴ, ԵԹԷ ՈՔ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԿԱՄ ՅԻՇԽ-
ԱՆԱՑ ՀԱԿԱՌԱԿԻ ԵՒ ՀԱՆԷ ՅԷԿԵՂԷՑՈՅՍ՝ ԵԴԻՑԻ ՆԶՈՎ-
ԵԱԼ ՅԻՆԵՆ ՅԺԸ (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ, ԵԴԻՑԻ, ԵԴԻՑԻ: ԱՄԷՆ:

*Հրատ.* Զալալյանց, Ա, 18, ՎՏ,100, Ոսկյան, Գվ. 46

***Ծանոթ.*** Պետք է կարծել, որ ավելի վաղ կառուցված վանքն օրհնվել է 1236 թ.՝ այստեղ միաբանության հաստատվելու կապակցությամբ և, այդ առթիվ, Հաղբատի վանքին պատկանող Դսեղի ժողովուրդը գյուղի ծախսը (գանձվող եկամուտների որոշ մասը) հանձնել է Քառասուն Մանկանց վանքին:

**888. ԵԿԵՂԵՑԻ.** Արևմտյան պատի հարավակողմում, արտաքուստ, 6 տող.



⌈ՇՆՈՐ⌉ՀԱՒՔ⌈Ն ԱՅ ... ՄԻ-⌉
ԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՔԱՌԱ⌈ՍՆԻ-⌉
ՑՍ ԵՒ ՄԻԱԲՍՆՔՍ ԽՈՍՏ⌈ԱՑԱՆ⌉
... ԻՔՍ ՅԱՒՈՒՐ ԱԻՍ... ⌈ԱՒՐ-⌉
⌈ՀՆԻ⌉Ի ՏԷ ԵՒ ՈՐՔ ԿԱ ...
⌊ԹՎԻՆ⌋ ՉՁ (1331):

*Ծանոթ.* Հինգերորդ տողի վերջին բառի տակ պատիվ նշաններ կան, որից երևում է, որ սրանից ներքև ևս արձանագրություն է եղել: Թիվը գրված է մի առանձին քարի վրա, բայց թվում է՝ տեղում է: Սա վանքի որմերի վերջին թվագիր արձանագրությունն է, իսկ թիվ չունեցողները հիմնականում վերաբերում են ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև այս ժամանակները:

*Նշված թվականը, թե տառաձևերով, թե տեղադրությամբ կապ չունի այս վկայագրի հետ (խմբ.):*

***889. ԵԿԵՂԵՑԻ.*** արևմտյան պատին, նախորդից ներքև և աջ, արտաքուստ, 8 տող.



ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ[Ն] ԱՅ ԵՍ՝ ԽԱՉԱՏՈՒՐ, ԾԱ[Ռ]-
ԱՅ ԱՅ, ՇԻՆԵՑԻ ԶԺԱՄԱՏՈՒՆՍ ԵՒ
ՍԱԼԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ: ՄԻԱԲԱՆ-
ՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ՅՈՎԱ-
ՆՈՒ :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ ՍԱՐԳՍԻ ԵՒ ՄԱՒՐ Ի[Մ]-
ՈՅ ՄԱԼՔԱՅԻՆ ԵՒ ԻՆՁ՝ ՄԵՂՈՒՑԵԼՈՅ-
Ս: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԵՒ ՈՔ ԽԱՓԱՆ-
[Է՝ ԴԱՏԻ Ի ՏԷ]:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 119, ՎՏ,150 (կրճատումներով). Ոսկյան, Գվ, 47:

*Ծանոթ.* Հատկանշական է, որ սովորաբար եկեղեցուն կցարկվող գավիթ կոչվող շինությունն այս դեպքում իրավացիորեն անվանված է ***ժամատուն:*** Այն ավերվել է երկրաշարժից, մնում են ստորին շարքերը:

***890. ԵԿԵՂԵՑԻ.*** արևմտյան պատին, նախորդից վերև, արտաքուստ, 5 տող.



. . . . . . . . . . [ՄԻԱԲԱՆԵ]ՑԱ ԵՒ ԶԻՄ ՀՈԳՈ
[ՊԱՇԱՐՆ ԵՏՈՒ ՍԲ ՔԱՌԱՍՆԻՑՍ]: ԱՌԱՔԵԼ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] ԵՒ ՄԻԱ[Բ]-
[ԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի ՏԱՒՆԻ Դ]ԱՒԹԻ ՈՒ ՋԱԿՈԲ[ԱՅ]
. . . . [Մ]ԵՂԱՑՍ ՊԱՐՏԱԿԱՆ
[Է, ՅԺԸ (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՆՋՈՎՍ ԱՌ]ՑԷ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ[Ե]ԻՆ ՅԱՅ:]

*Ծանոթ.* Արձանագրության ձախակողմյան քարը չկա: Ժամանակակից է հաջորդին (1285 թ.):

*Պահպանվածության այս վիճակում դժվար է ասել, թե որ կողմի քարը չկա, մի գուցե երկու կողմից էլ եղել են (խմբ.):*

***891. ԵԿԵՂԵՑԻ***. արևմտյան պատին, նախորդի վերին շարքում.

... ՅԱՅ:

***Ծանոթ***. Ողորկ երեսակալի ձախ եզրում միայն այս մի բառն է, ինչ-որ արձանագրության վերջն է, բայց ոչ նախորդինը:

***892. ԵԿԵՂԵՑԻ***. արևմտյան պատին, նախորդին մոտ, արտաքուստ. 5 տող.



... ԱՐ ԵՒ ՅՈՎԱՆԷՍ, ՄԻ[ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՔԱՌԱՍՆԻՑՍ ԵՒ ՏՈՒԱՔ ՁՄԵՐ ՀՈԳ]Ո ՊԱՇԱՐՆ ՅԵԿԵՂԵ[ՑՈՅՍ ԵՒ ՍՊԱ-ՍԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ . . . ՊԱՏԱՐԱ]Գ ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ[ԻՔՍ]: . . . ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏ[Ի Ի ՏԷ, ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ-ՆԻՆ] ՅԱՅ:[ԹՈՒԻՆ]:ՉԼԴ: (1285):

***Ծանոթ***. Տեղահանված նման բեկորները շատ են և հնարավոր է, որ մանրակրկիտ բաղդատությամբ դրանցից մեկը լրացնի մյուսին:
*Թերի պահպանվածությունը հնար չի տալիս որոշակի տողանջատելու (խմբ.):*

***893. ԵԿԵՂԵՑԻ***. արևելյան պատին, առաջին տողը եղծված, 5 տող.



...[ՄԻ]ԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՔԱՌԱ[ՍՆԻՑՍ]
...ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏ[ԱՑԱՆ]
... Ի ՔՍ ՅԱՒՈՒՐ ....
... Ի ՏԷ ԵՒ ՈՐՔ ԿԱՏ[ԱՐԵՆ ԱՒՐՀԻՆ ՅԱՅ]:

***Ծանոթ***. *Կարծում ենք, որ այս և թիվ 888 արձանագրությունները նույնն են (խմբ.):*

***894. ԵԿԵՂԵՑԻ***. արևմտյան պատին, արտաքուստ, 5 տող.



....... ՔԻ ...
......... ՁՎ ...
[ԽՈՍ]ՏԱՑԱՆ ՄԵՁ :Ա: (1) ԱՒՐ [ՊԱՏԱՐԱԳ
ԱՎԱ]Գ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ: [ՈՐՔ
ԿԱ]ՏԱՐԵՆ՝ ԱՒՐՀՆ[ԻՆ ՅԱՅ:]

***Ծանոթ***. Քարը տեղահանված է, կողքի երեսակալները՝ փոխված: Վերին եզրի երկու տողերը կոտրված-ոչնչացված են:

***895. ԵԿԵՂԵՑԻ***. Գետնախարսխից հանված քարի վրա. գեղագիր, պատվի նշանով.



ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ

*896. ԵԿԵՂԵՑԻ.* արևմտյան պատին, նախորդին կից աջից, 5 տող.



[ԵՍ՝ ԽԱՉԱ]ՏՈՒՐ, ԾԱՌԱՅ ԱՅ ԵՒ ՈՐԴԻ ԻՄ ՀՄ[ՍԱՆ]
[ՄԻԱԲԱՆԵ]ՑԻ ՍԲ ՔԱՌԱՍՈՒՆՔՍ ԵՒ ՏՎԱՔ ԸՍԱ-
. . . [ՄԻ]ԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԶՍԲ Մ[ԱՐԳՍԻ ՏԱՒՆԻՆ]
[ԶԱՄԵՆ ԵԿԵ]ՂԵՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶԻՄ ՅԱՆՈՒՆ:
[ԽԱՓԱՆՈՂՔՆ] ՅԺԸ (318) ԻՑՆ ՆԶՈՎԱԾ ԵՆ:

*Ծանոթ.* Արձանագրությունը կրող երեսակալը նախնական տեղում է, սակայն ոչնչացված են սկիզբն ու շարունակությունը կրող առաջին ու երրորդ քարերը:

*897. ԵԿԵՂԵՑԻ.* հյուսիսային պատին՝ ավանդատանը, ներքուստ, 5 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱԶԱՏՇԱՀՍ, ՄԻԱԲԱՆԵՑ-
Ա ՎԱՆԻՑՍ ԵՒ ԵՏՈՒ ԶԾՈՎԱՏ[Ե]ՂԱՑՆ ՀՈՂՆ ԵՒ ԱՅԼ
ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆ: ԵՍ՝ ՅՈՀԱՆԷՍ, ԱՌԱՋՆՈՐԴ
ՏԵՂՈՅՍ, ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ, ԸՆԿԱԼԱՔ ԵՒ ՏՈՒԱՔ :Գ: (3) ԺԱՄ Ի
ՍԲ ՔԱՌԱՍՆԻՑՆ ՏԱՒՆԻՆ, [ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ Ս]ԱՏԱՆԱԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է:

*Հրատ.* Ջալալյանց. Ա. 119. ՎՏ.150. Ոսկյան. Գվ. 47:

*Ծանոթ. Ջծովատեղացն հողն* ասելով նկատի ունի Դսեղից հարավ, անտառի փեշին գտնվող լճի՝ Ցզրկածովի մոտի հողը:

*898. ԵԿԵՂԵՑԻ.* հյուսիսային պատին, նախորդից ներքև, ներքուստ, 8 տող.



ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ԾԱՌԱ ԱՅ, ԱՆ-
ՅԻՇԱՏԱԿ ԳՈԼՈՎ Ի ՉՔԱՒՈՐՈՒԹ-
ԵՆԷ, ԸՆՉԻՑ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԵԿԵՂԵ-
ՑՈՅՍ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ԽՈՍ-
ՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻՆ :Ա: (1) ՊԱՏԱՐԱԳ Ի Տ-
ԱՒՆԻ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ, ԵՒ ՈՎ ԽԱՓ[ԱՆ]Է՝ ԶԱՆԷ-
ԾՍ ՅՈՒԴԱՒ ԵՒ ԶԿԱՅԵՆԻՆ ԱՌՑԷ:

*Հրատ.* Ջալալյանց. Ա. 120. ՎՏ.151. Ոսկյան. Գվ. 47–48:

*Ծանոթ.* Արդ. ինչ պետք է հասկանալ արձանագրության բնաբան *անյիշատակ գոլով ի չքաւորութենէ, ընչից միաբանեաց եկեղեցոյս* արտահայտության տակ: Իսկապե՞ս Գրիգորը ափսոսանքով մատնանշում է իր աղքատությունը, ունեզրկությունը (ի չքաւո-

րութէնէ): Այս դեպքում չէ՞ որ նվիրաբերած 90 գրամ ոսկին (1 պատարագը հավասար է 20 դահեկանի, մեկ դահեկանը՝ 4,5 գրամ ոսկու, հետևաբար՝ 20x4,5=90 գրամ կարմիր ոսկի՝ դահեկան կամ դահյակ) չի խոսում հօգուտ աղքատության: Բացի այդ, չքավորությունը ինչո՞վ պիտի առնչվեր անհիշատակ մնալուն: *Անյիշատակ գոլով ի չքաւորութէնէ* պետք է ընկալել, որ Գրիգորն ինչ-որ *տկարության, անկարության* հետևանքով մնացել է *անժառանգ, առանց հետնորդի (= անյիշատակ գոլով)*, ուստի այս նվիրաբերությամբ հուսացել է չջնջվել մարդկանց հիշողությունից, ինչպես և կա:

***899. ԵԿԵՂԵՑԻ***. հյուսիսային պատին, նախորդից ներքև, ներքուստ, 5 տող.



ԵՍ՝ ԴԱՐԲԻՆ ՄԽԻԹԱՐ, ՄԻ-
ԱԲԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ.
ԵՒ ԱՐՆԵՆ ԻՆՁ :Ա: (1) ԺԱՄ Ի ՏԱՒ-
ՆԻ ՍՐԲՈՅՆ ԳԵՈՐԳԱ: ՈՎ
ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ԱՅ:

***Ծանոթ***. Երրորդ տողը գրված է երկրորդի շարունակության վրա: Ըստ երևույթին, ուզեցել է թվել դարբին Մխիթարի նվերները: Հասկացվում է, որ հողամաս և այգի են եղել դրանք:

***900. ԵԿԵՂԵՑԻ***. հյուսիսային պատին, նախորդներից ներքև, ներքուստ, 6 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ՔԵՐՈԲՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԹԱԳՈՒՀԻ,
ՄԵԾԱՒ ՅՈՒՍՈՎ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՎԱՆԱՑՍ ԵՒ ՁԻՆՉ
ՄԵՐ ՀՈԳՈ ՊԱՇԱՐ ԿԱՅՐ՝ ՏՈՒԱՔ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ՄԻԱԲԱՆՔՍ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՂՈՅՍ ԽՈՍՏԱՑԱՆ ՄԵԶ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ՁՍԲ ՍԱՐԳ-
ԻՍՆ: ՈՎ Խ[ԱՓԱՆ]Է՝ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 120, ՎՏ,15, Ոսկյան, Գվ. 48:

***Ծանոթ***. Այս վանքի վիմագրերում հաճախ են բավարարվում առաջնորդ բառով և չեն նշում նրա անունը: Այդ պատճառով մեզ հայտնի են ընդամենը չորսի անունները՝ Գեորգ, Առաքել և Յովհաննես, Հայրապետ: Հայրապետն առաջնորդել է 1276 թ.: Անհայտ են նաև սրանց առաջնորդության տարիները:

*901. ԵԿԵՂԵՑԻ*. հյուսիսային պատին, ներքուստ, նախորդներից ներքև, 5 տող.

ԿԱՄԱՒՆԱՅԵՍԱԶԳՈՒՆՍԶԾՊՂԵՐԵԿՈՀ
ՈՂՆՏՈՒԻԻՄԵՂԲԱՐՀՈԳՈՅՆԽԱՉԵՐԵՍԻՆԵ
ՍՈՐՔԱԽՈՍՏԱՑԱՆ:Ա:ՊԱՏԱՐԱԳԶՆՈՐԿԻՐԱԿ
ԷՆՈՎԶԱՅՆՀՈՂՆՅԱՅՍՏԵՂԱՑՍՀԱՆԷ
ԶԻՄԺԱՄՆԽԱՓԱՆԷՅՈՒԴԱՅԵՒԿԱԵՆԻՄԱՍՆԱԿԻՑԷ

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱԶԳՈՒՆՍ, ԶԾՊՂԵՐԵԿՈ Հ-
ՈՂՆ ՏՈՒԻ ԻՄ ԵՂԲԱՒՐ ՀՈԳՈՅՆ՝ ԽԱՉԵՐԵՍԻՆ: ԵՒ
ՍՈՐՔԱ ԽՈՍՏԱՑԱՆ :Ա: (1) ՊԱՏԱՐԱԳ ԶՆՈՐ ԿԻՐԱԿ-
ԷՆ: ՈՎ ԶԱՅՆ ՀՈՂՆ ՅԱՅՍ ՏԵՂԱՑՍ ՀԱՆԷ
ԶԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ՝ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ԿԱԵՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 120, ՎՏ,151, Ոսկյան, Գվ. 48:

*Ծանոթ*. Քույրը հողը նվիրել է եղբոր՝ *խաչերեսի* հոգու համար: Ջալալյանցը *ես՝ Ազգունս, զծպղերեկոյ հողն* կարդացել է *ես Խաչգունդս զԾողիրկայ հողն*, իսկ վերջին՝ *Յուդայի եւ Կաենի մասնակից է* հատվածը՝ *դատի յԱստուծոյ:*

*902. ԵԿԵՂԵՑԻ*. Նախորդից վերև, առանձին քարի վրա.

ՅԱ[ՆՈՒՆ]...

*Ծանոթ*. Թվում է՝ վերաբերում է Ազգունի նվիրագրին, որը սկսվելու էր *յանուն* բառով, սակայն փոխարինվել է *կամաւ*-ով:

*903. ԵԿԵՂԵՑԻ*. հարավարևելյան ավանդատան բարավորի վրա, խիստ եղծված, ներքուստ, 7 տող.

····ՇՆՈՐՀԻՒՆԱՅԵՍ'···
ՏՍԵԱՄՈՒՍԻՆԻՄՄԻԱԲԱՆԵՑԱՔ
ՄԵՐՀՈԳՈՊԱՇԱՐՆՅԵԿԵՂ'·
Ո·ՄՈՌՍԷ'', ԱՅԼՄ··
ԿԱԼԱՆԵՀԱՍՏԱՏԵՑԻՆԶԱ··Ժ
ԶԱՄԷՆԵԿԵՂԵՑԻՔՍՊԱՏԱՐԱԳ···
ՏԱՐԻՉՔՆԱՒՐՀԻԵԽԱՓ···  ՈՆՄԵՂԱ·

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ԵՍ .............
ՏՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ [ՄԲ ՔԱՌԱՍՆԻՑՍ ԵՒ ՏՈՒԱՔ]
ՄԵՐ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆ ՅԵԿԵՂ[ԵՑԻՍ].....
.......ԵՒ... ԱՅԼ ՄԻ[ԱԲԱՆՔՍ ՍԻՐՈՎ ԸՆ]-
ԿԱԼԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Զ:Ա: (1) [ԱՒՐ] Ժ[ԱՄ]
ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳ[ԵԼ: ԿԱ-]
ՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ[Ն]Ի[Ն] ԵՒ ԽԱՓ[ԱՆՈՂՔ]Ն ՄԵՂԱ[ՑՍ ՏԵՐ] Է:

**904. ԵԿԵՂԵՑԻ.** հարավային պատի արևմտյան մասում, արտաքուստ, 2 տող.



Ի ԹՎ⌊ԻՆ⌋
Ո̅Ղ̅Բ̅ (1243):

***Ծանոթ.*** Հնարավոր չէ պարզել, թե որ արձանագրությանն է պատկանում, բայց հնագույն վկայություններից է:

**905. ԵԿԵՂԵՑԻ.** նախորդից մի շարք վերև, երեսակալ քարի աջ պռնկին. մնացորդ.

ԱՈ
ՍԹ

**906. ԵԿԵՂԵՑԻ.** հարավային պատի վերնամասում, արտաքուստ, 7 տող.



Ի ԹՈՒ⌊ԻՆ⌋
ՉԺԴ (1265),
ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ԵՍ՝ ՄԽԻԹԱ[Ր, ՄԻԱԲԱՆԵՑԱ Մ̅Բ̅ ՔԱՌԱՍՆԻՑՍ]
[ԱՌ]ԱՋՆՈՐԴՈՒԹԵ⌊ԱՄԲ⌋ ԳԵ⌊Ո⌋Ր⌊Գ⌋ Վ⌊ԱՐ⌋Դ⌊ԱՊԵՏ⌋ԻՆ [ԵՏՈՒ]...
ԵՒ ՁԱՐԾԱԹԻ Մ̅Բ̅ ՆՇԱՆ Ո ...................
ԻՆ ՁԾԱՌՁԱՐԹԱՐՆ [ՏԱՒՆԻՆ]................
ՈՒՆԵՆ ԵՒ ՁԱՅԼՆ Ի Ն ...........

***Ծանոթ.*** Թիվը գրված է վերին քարերի վրա, որոնք տեղում են: Վերջին *զայլն ի ն* կարող է լինել և *զայլնին:*

**907. ԵԿԵՂԵՑԻ.** հարավային պատի վերնամասում, նախորդին կից, աջից, 7 տող.



ՅԱՆՈՒՆ Ա̅Յ̅, ԱՌԱՋ[ՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ] . . .
ԵԿԻ Ի ՊԱՐՈՆԻՆ ԾԱՌ⌊ԱՅ⌋Ո[ՒԹԵԱՆ]...
ՈՅՍ ԿԷՍՆ ՏՂԱՅԻՆ, ԿԷՍՆ . . .
ԳԻՐՍ՝ ԱՅԼ ՈՉՈՎ ԽԱՓԱՆԵԼ ՉԿԱՐԷ...
ՈՒ ԽՂՃԻՍ ՏԷՐ Է ՈՒ ԿԱ . . . .
ՁԻՄ ԱՐԵՆ ԳԻՆՔ ՈՒ ՀԷՐ . . . .
ՁԱՌ ՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ ՎԱՆՍ . . . .

***Ծանոթ.*** Արձանագրության տողերի վերջավորությունները բովանդակող քարը չի պահպանվել, որի հետևանքով մնում է թերի:

***908. ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատի արևմտյան մասի վերին շարքում մի քարի վրա, բոլոր կողմերից բեկի, 5 տող.

| | |
|---|---|
| ԴԾԱ ՈՒՐ | [ԿԱՄԱՒՆ $\overline{ԱՅ}$ Ե]Մ՝ ԾԱ[Ն]ՈՒՐ |
| ԲԱՆՆՑԱՓ | ...[ՄԻԱ]ԲԱՆԵՑԱՔ ... |
| ԻՆՆՐՔՈԳ | ...Ի ՆԵՐՔՈ Գ ... |
| ԱՆԵԱԷՆՄՐ | ԱՆ ԵՒ ԱՒԵՏԱ[ՐԱՆ] ...... |
| ՈԱՄԱՅԱՆՅ | [Խ]ՈՍՏԱՑԱՆ Յ ... |

***Ծանոթ.*** Հասկացվում է, որ նվիրվել է Ավետարան, փոխարենը խոստացել են պատարագներ: Անձնանունը երկմտելի է:

*Լուսանկարում ԾԱ-ից առաջ հավաստիորեն փորագրված է Ա (աջ կեսը, հետո հազիվ ուրվագծվում է շրջանագծով տառ՝ Ց կամ Ծ (ավելի հավանական՝ Ծ), որից հետո ՈՒ (միատառ) կամ Ո, Ա և Կ, այսինքն կարդացվող տառախումբը հետևյալն է. ԱԾԱԾՈՒԱԿ կամ ԱԾԱԾՈԱԿ: ԱԾ տառերի վրա, մեծ ցանկության դեպքում կարելի է նշմարել պատիվ նշանի հետքեր: Ըստ այսմ բառանջատման մի քանի տարբերակ. կարելի է առաջարկել՝ ԱԾ տառերով ավարտվող բառ, ԱԾ(Ա[ՍՏՈՒԱ]Ծ) և ՈԱԿ-ով սկսվող բառ: Մյուս տարբերակները՝ ԱԾԱԾ ՈՒ ԱԿ..., ԱԾԱԾ ՈԱԿ... (խմբ.):*

***909. ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատի արևելյան մասում, մի քարի վրա:

ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆ
... ՅԱ .........

***910. ԵԿԵՂԵՑԻ.*** հյուսիսային պատին արտաքուստ, մի քարի վրա, թերի, 3 տող.

| | |
|---|---|
| ՈՀԵՆՑԹՌՆՄԱԲԱ | ... ՈՅԵՆՑ Թ[Ո]ՌՆ, ՄԻԱԲԱ[ՆԵՑԱ] ... |
| \|ՎԱՏԵՂԱՑՀՈՂ | ...[ԵՒ ԷՏՈՒ Ծ]ՈՎԱՏԵՂԱՑ ՅՈՂ[Ն] ... |
| ∘ՈՒՆՅԱՌԱՋՆՈ ∘ԻԻ՛ | ...[Ե]ՏՈՒՆ ՅԱՌԱՋՈ[ՐԴ] ... |

***Ծանոթ.*** Հասկացվում է, որ տրված է հողամաս Ծովատեղում: Քանիցս հիշատակված այս լճակը այժմ հայտնի է ՏՁՐԿԱԾՈՎ անունով, որտեղից վանքին հող է նվիրել նաև Ազատշահը (արծ. N 897):

***911. ԵԿԵՂԵՑԻ.*** նույն պատին, մնացորդ, 3 տող.

| | |
|---|---|
| ՆԱԶԽԱ | ... ԾՆԱՒ ՁԽԱ ... |
| ՆԵԽԱՓԱՆ | ... ՆԵ ԽԱՓԱՆ- |
| ՈՂՆ ԴԱՏԻՒՏԷ | ՈՂՆ ԴԱՏԻ Ի $\overline{ՏԷ}$: |

***Ծանոթ.*** *Առաջին տողում Ծ-ն կասկածելի է. Ա-ի աջ ուղղահայացին կցված Ի-ի կարճ հորիզոնականը ըստ մեզ կոտրվածք է, Խ-ի կիսակլորին կցված Ա-ն նույնպես կասկածելի է: Երկրորդ տողում Ն-ից հետո ոչ թե Ե է, այլ ԵՒ (Ե-ի երկար ուղղահայացի վրա երկու կարճ հորիզոնականներ) (խմբ.):*

***912. ԵԿԵՂԵՑԻ***. երեսակալ քարի վրա, 5 տող.

⌈ԿԱՄԱՒ⌉Ն ԱՅ ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ . . .
. . . ՆԱԶԽԱԹՈՒՆ, Մ⌈ԻԱԲԱՆԵՑԱՔ⌉. . .
. . . Ս ՄԱՄԱՔ ՈՒ . . .
. . . ԱՄԻ ԵՒ ՏԿԱՔ ՏԱ . . .
...ԴՐ.Ե ԳԷՐՍ...:

***Ծանոթ.*** Այս և հաջորդ չորս բեկորները հայտնաբերվել են եկեղեցու փլատակների պեղման ընթացքում: Դրանք ընդօրինակել և վերծանել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական արշավախումբը:

***913. ԵԿԵՂԵՑԻ***. ընկած երեսակալ քարի վրա, 3 տող.

. . .⌈ՅԺԸ (318) ՀԱՅՐԱՊԵ⌉ՏԱՑՆ ՆԶՈՎԱԾ Է ԵՒ ՅԻ. . . ՈՒՄՍՆ ՋՈՒԳ . . .
. . . ՎԿԱՅ ԳՐԻՍ ՈՂՋ ԻՄՈ . . .
. . . Ն:

***914. ԵԿԵՂԵՑԻ***. ընկած բեկորի վրա.

. . .⌈ԴԱ⌉ՏԻ Ի ՔՍ:

***915. ԵԿԵՂԵՑԻ***. ընկած երեսակալ քարի վրա.

. . . Յ ՊԵՏՐ⌈ՈՍ ԵՒ ՅՈՎԱ⌉ՆԷՍ . . .
. . .⌈ՄԻԱ⌉ԲԱՆԵՑԱՔ ՔԱՌԱ⌈ՍՆԻ⌉
ՑՍ, ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ . . .
Ի ՔՍ ՅԱՒՈՒՐ ՏԱՒՆ⌈Ի⌉. . .
ԻՄԷ ԵՒ ՈՐՔ ԿԱՏ⌈ԱՐԵՆ՝ ԱՒՐՀՆԻՆ Յ ԱՅ⌉:

***916. ՏԱՊԱՆԱՔԱՐ***. եկեղեցուց հարավ, 5 տող.



ԱՅՍ Է ՏԱ-
ՊԱՆ Մ⌊ԱՐ⌋Կ⌊ԱՒԱ⌋Գ
ՎԱՐԴ⌊Ա⌋ՆԻՆ:
ԹՎ⌊ԻՆ⌋Ո
ՌԽԱ (1692):

***917. ԵԿԵՂԵՑԻ***. ընկած երեսակալ քար, 6 տող.



⌈ԿԱՄԱՒՆ⌉ ԱՅ ԵՍ՝ ՎԱՐՀ⌈ԱՄ⌉. . .
⌈ԳԱՆՁԱԳԻ⌉Ն ԱՐԱՐԱՔ ՁՄԲ . . .
⌈Փ⌉ՐԿՈՒԹԵ⌊ԱՆ⌋ ՀՈԳՈ⌈Ց ՄԵՐՈՑ:⌉. . .
ԻՍ ՍԱՀՄԱՆԵՑ . . .
ԵԿԵՂԵՑԻՔՍ Պ⌈ԱՏԱՐԱԳԵԼ Զ⌉
ԱՒԵՏԱՐԱՆ ԱՅ...:

***Ծանոթ.*** Ըստ երևույթին Ջալալյանցի հրատարակած ՉԻԵ-1276 թ. արձանագրության մի մասն է (Ա, 118)՝ թեև կան որոշակի տարբերություններ:

*Սաղումյանը անունը կարդացել է ՎԱՀՐԱՄ, իսկ վերջին տողը՝ ԱՒԵՏՍԱՆ ԱՅ (խմբ.):*

*918. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատից ընկած երեք քարերի վրա, հողմահար 8 տող, որոնցից կարդացվում է վերջին 3 տողերի սկզբնամասը.



... ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ...
[ԿԱ]ՏԱՐԻՉՔՆ ԱՒ[ՐՀՆԻՆ Ի ՏԷ]
...[ՊԱՐՏԱԿ]ԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

*919. ԵԿԵՂԵՑԻ*. բեկոր՝ ընկած ավերակներում.



...ՍԱՌՐ ...
...ԻՆԱԿ ...
...ԴԻՆ ԵՒ ...:

*920. ԵԿԵՂԵՑԻ*. պատից ընկած երեսակալ քարի վրա, արձանագրության մի մասը, 3 տող.



[ՅԺԸ (318) ՀԱՅՐԱՊԵՏ]ԱՑՆ ՆԶՈՎԱԾ Է ԵՒ ՅԻՄ
........ ՈՒ ՄԱՍՆ ԶՈՒՂ[ԱՒ ԱՌՑԷ՛]
ՎԿԱՅ ԳՐԻՍ ՈՂՋԻՍ ...:

*921. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատից ընկած երեսակալի վրա, 4 տող.



...[ՅՈՎ]ԱՆԻՍ ԵՒ ԱՍԼԱՆ ԵԶ
...ՉԻՏ ԿԱՅՐ՝ ԲԱԺԱՆԵՑԻ
...ԿԱՑԻ ՊԱՐՈՆԱՑՆ ԱՌԱՋԻ
...[ԼԻ]ՑԻ ՊԱՐՈՆԱՑՍ: ՈՎ ԽԱՓԱՆԵԼ Զ[ԱՆԱ]...

*Ծանոթ*. Սկզբում եղել է մի քար ևս, առանց որի իմաստը չի ամբողջանում:

*922. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատից ընկած երեսակալի վրա, 2 տող.



ԱՍՁ...
ԵԿԵՂԵՑ...

*923. ԵԿԵՂԵՑԻ*. հարավային պատից ընկած երեսակալի վրա, 5 տող.



...Ա...
...ՀԱՅՐ Հ
...ՂՈՍՈ ՈՒ
...ԱՒՐՀՆԻ
[Յ]ԱՅ:

***924. ԵԿԵՂԵՑԻ***. արևմտյան մուտքի աջ կողմում, արտաքուստ.

Կամաւն Աստուծոյ և հրամանաւ պարոնացն և Դաւիթին ես, Զամալարինս միաբանեցայ սբ Քառասնիցս և ետու զիմ հոգւոյ պաշարն և առի զՂամիշկուտի հողն. և ետու ի վանքս առաջնորդութեան Հայրապետիս, և նոքա ետուն ի մեռելոց գամէն եկեղեցին, ով հողս խլէ կամ զժամն խափանէ իմ մեղացն տէր է:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 118, ՎՏ,150, Ոսկյան, Գվ, 46-47:

***Ծանոթ.*** Հայրապետ առաջնորդը հիշված է նաև հաջորդ արձանագրության մեջ:

***925. ԵԿԵՂԵՑԻ***. նախորդից վեր.

Շնորհիւն Այ ես Վահրամ միաբանեցայ սբ Քառասնիցս
և գանձագին արարաք զսուրբ զաւետարանն, և տվաք
ի Քառասունքս Վս փրկութեան հոգոց մերոյ հայրա-
պետքս և միաբանքս կատարեցին զջրաւրհնէք աւուր
պատարագն մեզ պատարագել գամէն եկեղեցի.
թուին չիե (1276):

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 118, ՎՏ, 118, Ոսկյան, Գվ, 46:

***Ծանոթ.*** Այս արձանագրության մի քարն ընկած է եկեղեցու մոտ, որը տրված է վերևում: Ըստ այդմ, պետք է կարծել, որ եկեղեցու հիմնական ավերումը տեղի է ունեցել 1841 թ. հետո, երբ Ջալալյանցն արտագրել է հիշատակագիրը: Կամ, թերևս, եկեղեցին փլուզվել է 1827-1828 թթ. երկրաշարժից (ինչպես Վանածորի եկեղեցին), բայց արձանագրված քարերը դեռևս եղել են պատի վրա:

***926. ԵԿԵՂԵՑԻ***. ներքուստ, հյուսիսային ավանդատան բարավորի վրա.

Ես Աշոտ եւ ամուսին իմ Եսէ միաբանեցաք և մեր հոգոյ
պաշարն եկեղեցւոյս շինութեան տվաք Առաքէլ վարդապետ
և այլ միաբանքս ընկալան և հաստատեցին զԱստուածածնի
աւրն գամէն եկեղեցիքս պատարագել զՔրիստոս յանուն
մեր կատարիչք աւրինին յԱստուծոյ:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 119, Ոսկյան, Գվ, 47:

***927. ԵԿԵՂԵՑԻ***. ներքուստ, հյուսիսային պատի վրա.

Ի թուին ՈՂ (1241) յիշխանութեան Աշոտոյ և յառաջ-
նորդութեան Յոհաննէսի ես Դաւիթ . . .առաջի ընծայ
բերի և շինեցի զտունս եւ սպասաւորք սորա խոստացան
ի տարին Բ պատարագ, որք խափանեն դատին
ի Տեառնէ կատարիչքն աւրինին յԱստուծոյ:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 120, Ոսկյան, Գվ, 48:

***Ծանոթ.*** Ըստ այս շինարարական արձանագրության Քառասնից մանկանց վանքի գլխավոր եկեղեցին կառուցել է Դավիթը 1241 թվականին, Աշոտ Մամիկոնյանի իշխանության ժամանակ: